

---

ՀՀ ԳԱԱ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱՆ ԳԱԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

Սույն թվականի հունիսի 27-ին և 28-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացան ՀՀ ԳԱԱ կառավարման մարմինների՝ նախագահի, փոխնախագահի, ակադեմիկոս-քարտուղարի ընտրությունները: ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովին 159 հոգուց մասնակցում էին 135-ը: Վլադիմիր Բարխուդարյանը ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնի համար առաջադրեց ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի թեկնածությունը:

Իր ելույթում ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ժողովին յուրովի հաշվետվություն տվեց անցած ժամանակաշրջանի համար: Նա մասնավորապես ասաց. «Մեզ հաջողվեց ձեռք հետ միասին ստեղծել 5 գիտական կենտրոններ, որտեղ ընդգրկվեցին նաև այլ գերատեսչությունների կազմում գտնվող կարևոր ինստիտուտներ: ...Հաջորդ հարցը տնօրենների սերնդափոխությունն էր, և մենք ունեցանք տնօրենների մի սերունդ, որը փայլուն դրսևորեց իրեն, և այսօր գիտության դրական միտումը պայմանավորված է այդ տնօրենների նվիրված աշխատանքով ևս: ...2011 թ-ին ԱԺ-ն ընդունեց «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը, որով ստեղծեց իրավական դաշտ ԳԱԱ-ի համար: Դրա հիման վրա ստեղծվեց ԳԱԱ կանոնադրությունը, որով մենք առաջնորդվում ենք: ...Կարևոր քայլ էր ՀՀ ԳԱԱ համակարգում արտասահմանյան անդամների ինստիտուտի ստեղծումը, ինչի հաշվին մեկ տարվա ընթացքում 50-ից ավելի ծրագրերում մասնակցեցին սփյուռքահայ գիտնականներ»:

Ռադիկ Մարտիրոսյանը նաև կարևորեց սոցիալական խնդիրները՝ նշելով միջին աշխատավարձի բարձրացումը մինչև 100.000 դրամ, ակադեմիայի աշխատակիցների համար նախատեսված սոցիալական փաթեթը, երիտասարդ գիտնականների համար իրականացված բնակարանաշինությունը, որը շարունակվում է, գիտաաշխատողների համար երկարացված արձակուրդի վերադարձը, գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների ավելացումը և այլն:

Որպես գալիք տարիների գործունեության ուղենիշեր Ռադիկ Մարտիրոսյանը նշեց. «Առաջին ուղենիշը մեր հիմնարար հետազոտությունների արդիականացումն է: Մյուսը կիրառական հետազոտությունների ինտեսիվացումն է և այնպիսի աշխատանքներ, որոնք տալիս են ռեալ արդյունք՝ հատկապես երկրի պաշտպանության համար: Մյուսը գիտական ակտիվության չափանիշների և գիտական ակտիվության գնահատականների համակարգի ներդրումն է, որը արդեն կատարվում է:

Սոցիալական հարցերը պետք է լինեն մեր ուշադրության կենտրոնում: Ընդհանուր աշխատավարձի բարձրացում պետք է լինի, պետք է լուծում ստանա գիտական աստիճանի հավելավճարները թոշակին միացնելու հարցը, պետք է բարելավվեն մեր աշխատանքային պայմանները և տեխնիկական բազան: Մենք ունենք նոր հնարավորություններ, որոնք ստեղծված են միջազգային համագործակցության համար, մասնավորապես, «Հորիզոն 2020» միջազգային ծրագիրը հնարավորություն կընձեռի լրացուցիչ միջոցներ ստանալ»:

Քվեարկության արդյունքներով ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը վերընտրվեց ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում:

ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում առաջադրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Շուքուրյանի, իսկ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանի թեկնածությունները, որոնք էլ վերընտրվեցին իրենց պաշտոններում:

\*\*\*

Հունիսի 28-ին տեղի ունեցած ՀՀ ԳԱԱ 5 բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների և ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների ընտրությունները: ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը: Նա այս պաշտոնում փոխարինելու է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Նորայր Առաքելյանին: ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը: Նա փոխարինելու է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Զիլինգարյանին: ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը: Նա այս պաշտոնում փոխարինելու է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանին: ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Թավադյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Մուվարյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Վանիկ Զաքարյանը, Էդուարդ Ղազարյանը, Գագիկ Ղազինյանը, Գևորգ Պողոսյանը, Աշոտ Մադյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Արամ Միմոնյանը, Արսեն Հախումյանը:

«Գիտություն», հունիս, -6, 2016 թ.